ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

Լերմոնտովո համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 21-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները; Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման վարչության պետ Միեր Խեչումյանը և նույն վարչության ավագ մասնագետ Լիլիթ Քոչարյանը:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը /N01/՝

1.2023 թ-ի բյուջեի կատարման և Տարեկան Աշխատանքային Պլանի կատարման հաշվետվությունների մասին

զեկ. Է.Չախալյան

2. 2024 թ-ի Տարեկան Աշխատանքային Պլանը հաստատելու մասին

զեկ. Է.Չախալյան

3. Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ.Մ Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> - 2023 թ-ի բյուջեի կատարման և Տարեկան Աշխատանքային Պլանի կատարման հաշվետվությունների մասին նախագիծը

-ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Էդիկ Չախալյանը:
Նա համառոտ պատմեց համայնքի մասին՝ համայնքի կրթական կազմակերպությունների՝ մանկապարտեզի, դպրոցի մասին; բնակչության ապրելակերպի մասին՝ ինչպես են զբաղվում

անասնապահությամբ և հողագործությամբ; ներկայացրեց 2023 թ-ին կատարած աշխատանքները: Ավագանու անդամների հետ տեղի ունեցան քննարկումներ, որոնց արդյունքում որոշեցին գնահատել կատարված աշխատանքները բավարար:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N02/

2. <u>ԼՍԵՑԻՆ</u> - 2024 թ-ի Տարեկան Աշխատանքային Պլանը հաստատելու մասին նախագիծը

- ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Էդիկ Չախալյանը, որը ներկայացրեց 2024 թ-ին նախատեսվող աշխատանքները՝ ճանապարհաշինության բնագավառում, աշխատակազմի պահպանության, աղբահանության և սան. մաքրման բնագավառում, մշակութային կյանքի խթանման, Անտառաշեն բնակավայրի գազաֆիկացման, մանկապարտեզի աշխատանքների բարելավման բնագավառներում: Ավագանու անդամները հավանություն տվեցին պլանավորած աշխատանքներին և քվեարկելուց հետո ընդունեցին որոշում:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N03/

3. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Լերմոնտովո համայնքի 2023 թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 36-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց, որ Լերմոնտովո համայնքի 2024 թ-ի բյուջեում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ: Ավագանու անդամների հարցերին պատասխանելուց հետո նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 4, ընդունվեց որոշում: /N04/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ